

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ՎԵՐՅԻՇԵԼՈՎ ԱՆՅՅԱԼԸ. ԱՂԴԻՍ ԱՐԱՐԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՐՐԱՍՊԱՐԱԿԱՆ ՎԵՐՅԻՇԵԼՈՎ 1965 ԹՎԱԿԱՆ

Շուրջ 45 տարիներ անցած են Աղդիս Արաբայի պապական համաժողովին՝ որ  
գումարուեցաւ 1965 թուի Յունուար ամսուն: Նախաձեռնութիւնը պաշտօնապէս կու գար  
Եթովպիոյ Ն. Վ. Նայլէ Սելասիէ Ա. կայսեր կողմանէ, սակայն յիշատի Նոյիկ Ուղղափառ  
հակաքաղկեդոնական Եկեղեցոյ վարդապետ Պօղոս Գրիգորիոս Վերգիզն էր  
խթանողը: Յունուար 8-13 տեղի ունեցաւ նախապարրասարական աստուածաբանական  
խորհրդակցութիւն, իսկ 15-21 օրերուն գումարուեցաւ մեծ համաժողովը՝ որոյ կը մասնակցէին  
հայ, ղպտի, ասորական, եթովպական եւ հնդիկ-ուղղափառ (մալաբար) եկեղեցիներու  
պապովիրակութիւնները:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նոր Գահակալի ընտրութեան պապճառած  
եկեղեցական քաղաքական (1956 թ.) քաղաքական ամբողջապէս չէր լուծուած եւ հետեւաբար  
Նայ Եկեղեցոյ մասնակցութիւնը Աղդիս Արաբայի համաժողովին՝ նոր հարցեր  
սրելով: Եթովպիոյ կայսեր հրաւերին Ն. Ս. Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Տայոց  
պարրասարականութիւն յայտնեց ընդառաջել՝ պայմանաւ որ Տայապարանայոց Առաքելական  
Ս. Եկեղեցին մասնակցէր միայն մէկ պարզամտութեամբ, որ պիտի ընդգրկէր  
նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի եւ Կ. Պօլսոյ պարրիարքութեանց  
ներկայացուցիչները:

Բնականաբար Եթովպական Եկեղեցին եւ կայսրը համաձայն էին Մայր Աթոռոյ  
պահանջին, սակայն Կիլիկիոյ Կաթողիկոսարանը կը պնդէր իր անկախութեան եւ  
ինքնիշխանութեան մասին: Այդ պապճառաւ Ամենայն Տայոց Տայապարանութեան  
մասնակցութիւնը անորոշ մնաց մինչեւ վերջին պահը: Յունուարի 8-ին, երբ կը բացուէր  
աստուածաբանական խորհրդակցութիւնը՝ Մայր Աթոռից սրացայ հետեւեալ հեռագիրը.

«Եթովպիոյ Կայսեր կողմից մեզ հաղորդուեց սկզբունքը Տայ Եկեղեցոյ  
մասնակցութեան Աղդիս Արաբայի ժողովին մէկ պարզամտութեամբ: Խորէն Կաթողիկոս

կրնայ մասնակցիլ միայն իբրեւ անդամ մեր պարզամտություններին: Բոլոր որոշումներու եւ յայտարարություններու ներքեւ կը ստորագլէ միայն Ամենայն Տայոց Կաթողիկոսը: Մեր պարզամտություններ մաս կը կազմեն նաեւ Եղիշէ պարրիարք, Շնորհք պարրիարք եւ Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան: Նախաժողովին մասնակցող ներկայացուցիչները կը լինեն Գարեգին եպիսկոպոս Սարգիսեան եւ Մեսրոպ վարդապետ Գրիգորեան: Տաճկեք այս բոլորը յստակ կերպով պարզել եւ անհրաժեշտը կարգադրել Մամբրէ արքեպիսկոպոսի հետ միասին: Մենք Աղդիս Աբաբա կը ժամանենք Յունուարի փասնչորսին:

Կաթողիկոս Վազգեն Առաջին»:

Միեւնույն օրը Վեհափառ Տայրապետին ուղարկեցի հետեւեալ հեռագիրը.

«Այսօր Գարեգին եպիսկոպոս անակնկալօրէն ժողովին յայտնեց թէ ինք կը ներկայացնէ Կիլիկիոյ անկախ Կաթողիկոսութիւնը: Պարասխանեցի՝ եթէ Տայ Եկեղեցոյ միակ պարտիրակութիւնը բաժնուի՝ եւ սրահը կը թողում: Ներկաները դիտել քուին թէ այդ առանձին կարգադրելի հարց է: Գարեգինը ըսաւ՝ Անթիլիաս նոր կարգադրութեան մասին հեռագիր ստացած է վերջին պահուն: Խնդիրը այսպիսով փակուեցաւ: Տեղւոյս հայ ժողովուրդը Ձեզ կը սպասէ անհամբեր:

Գրիգորեան»:

Միկողմից Աստուածաբանական նախաժողովը կը կարարէր իր խորհրդակցությունները, միւս կողմանէ կը շարունակուէին բանակցությունները՝ Մայր Աթոռոյ եւ համաժողովի պարասխանարարներու միջեւ: Յունուար 11-ին դարձեալ հետեւեալ հեռագիրը ստացայ Վեհափառ Տայրապետէն.

«Տայ Եկեղեցին ժողովին պէտքի է մասնակցի մէկ եւ անբաժան պարտիրակութեամբ՝ Վազգեն Կաթողիկոսի գլխաւորութեամբ: Եթէ այս սկզբունքը չի յարգուիր՝ գրաւոր բողոքելով (կամ չի յարգուիր գրաւոր) հեռացէք ժողովէն: Այս մասին այսօր հեռագրեցինք Աբբէրէ Ռեթային:

Կաթողիկոս»:

Վերջապէս փազնապին լուծում քրտեցաւ կէս իրաւ եւ կէս անիրաւ խօսքերով եւ խոսքումներով, եւ մենք Մամբրէ սրբազանի հետ հետեւեալ հեռագիրը ուղարկեցինք Մայր Աթոռ՝ 1965 Յունուար 11-ին.

«Վազգեն Կաթողիկոս

Երեսան-Էջմիածին

Տայ Եկեղեցոյ մէկ պարտիրակութեամբ Ամենայն Տայոց Տայրապետի գլխաւորութեամբ մասնակցելու սկզբունքը պիտի յարգուի: Ուրեմն կը սպասենք Ձեր ժամանման Յունուարի 13-ին եթէ կարելի է, այլապէս 14-ին

Մամբրէ արքեպիսկոպոս

Մեսրոպ վարդապետ»:

Ամենայն Տայոց Տայրապետէն առաջ՝ 13 Յունուար 1965 Աղդիս Աբաբա հասաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Խորեն Ա. եւ յաջորդ օրը ժամանեց Ն.Ս. Վազգեն Ա. Կաթողիկոս: Խորեն Ա. Կաթողիկոս այցելով քրտւոյն Տայ Առաքելական Ս. Գեորգ եկեղեցին՝ իր արքայասանած ճառին մէջ ի միջի այլոց ասաց.

«Արևելյան Ուղղափառ և դասնակից քույր եկեղեցիներու պետերու այս վեհաժողովին մասնակցելու համար՝ արդեն իսկ հասած են պատմության կտրուկ մեծ մասը, և այսօր կամ վաղը կը սպասենք որ անպայման գայ նաև մեր երեք և սիրելի եղբայրը՝ Ամենայն հոյոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա-ը: Մենք կը նկատենք որ քույր եկեղեցիներուս եղած այս հրաւերը քրիստոնեայ կայսեր մը կողմանէ՝ աստուածային բարիք ու շնորհք մըն է այդ եկեղեցիներուն և ի մասնաւորի մեր Եկեղեցին համար, բանի որ այսպէսով առիթ մը պիտի ստեղծուի որպէսզի Վեհափառ Տէր Վազգեն Ա. Կաթսիկոսի հետ բով բովի գանք և խորհրդակցենք անձնապէս մեր ժողովուրդը մտադրաւոր հարցերով՝ յօգուտ մեր ժողովուրդին»<sup>1</sup>:

Արդևօք իրապէ՞ս կաթողիկոսներու հանդիպումը Ադդիս Աբաբայի մէջ յօգուտ հայ ժողովուրդին դրական արդիւնք պարգևերեց: Առ այս լսենք Վազգեն Ա. Վեհափառ հայրապետի պատասխանը: 4 փետր. 1965 թուի հարցազրոյցի մը մէջ նա յայտարարած է.

«Մենք պնակահօրէն միասին էինք և յաճախ առիթներ ունեցանք՝ բարեկամական, մտերմական գրոյցներու ձևին վրակ խօսքի նստիլ այս հարցերուն շուրջ, սակայն որևէ արդիւնքի մասին ոչինչ կրնամ ըսել, որովհետեւ ամէն բան կը մնայ այն կացութեան մէջ, այն վիճակին մէջ, որ ծանօթ է ձեզի, մեր նամակներուն հրապարակումէն յետոյ, որով կացութեան մէջ որևէ փոփոխութիւն չկայ»<sup>2</sup>:

Միևնոյն հարցազրոյցի մէջ, կարարուած «Զարթօնք»-ի Գահիրէի թղթակցին կողմանէ՝ Վազգեն Ա. Վեհափառ հայրապետ հայ Եկեղեցոյ մասնակցութիւնը եկեղեցական համաժողովին կը բնութագրէ հետեւեալ ձևով. բառացի կը մեջբերենք՝ որպէսզի ռևէ սխալ արտայայտութիւն մեր կողմանէ թոյլ չտանք. «Ինչպէս ծանօթ է Ձեզի Մայր Աթոռի հաղորդագրութիւններէն, հայաստանեայց Եկեղեցին հրաւիրուած էր մասնակցելու մէկ պատմութեամբ, իր գրուիլը ունենալով Ամենայն հոյոց Կաթողիկոսը: Այդ հաւաստիացումով մենք ճամբայ ելանք դեպի Արիս Ապապա: Եւ սակայն հակառակ մեզի եղած հաւաստիացումներուն՝ այնպէս կացութիւն մը ստեղծուեցաւ, որ մեզի համար բոլորովին անցանկալի էր, և կը մտածենք թէ ցանկալի չէր նաև Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար:

Այս կացութիւնը մեր կամքէն անկախ ստեղծուեցաւ և որոշ դժուարութիւններ յարոյց ժողովի աշխատանքներուն, և նոյնիսկ երկու-երեք օր ժողովը չկրցաւ իր աշխատանքներուն սկսիլ, մեր եկեղեցոյ մասնակցութեան ձեւ մը չկարենալ գտնելու պարճառաւ: Ի վերջոյ մենք և Մեծի Տանն Կիլիկիոյ Խորէն Ա. Կաթողիկոսը, պեսնելով այս կացութիւնը՝ բարութեամբ համարեցինք չմասնակցիլ ժողովին, այլ ուղարկել միայն դիպորդներ, այդպէս ալ եղաւ: Յարուկ յայտարարութեամբ մը մենք հաղորդեցինք ժողովին՝ որ հայ Եկեղեցին պիտի չկրնայ մասնակցիլ ժողովին, առանց մասնաւոր բացարարութիւններ տալու: Բայց անշուշտ ժողովը գիտէր բուն պարճառը: Այս կերպով ժողովը իր բնական աշխատանքներուն կրցաւ սկսիլ՝ առանց մեր մասնակցութեան: Մենք միայն հանդիսաւոր բացման և փակման ներկայ եղանք, մասնակցեցանք բոլոր հանդիսութիւններուն և վերջաւորութեան՝ մեկնելէ առաջ մենք մեր հետ առինք ժողովին որոշումները և այլ փաստաթուղթեր, որոնց վրակ անշուշտ,

1 «Ազդակ» օրաթերթ, Պէյրուք, 22 Յունուար 1965:

2 «Զարթօնք» օրաթերթ, Պէյրուք, 4 Փետրուար 1965:

մենք ստորագրած չէինք: Այս ձևով եւ այս պայմանով մենք անմիջական մասնակցություն չբերինք ժողովին, ոչ մենք եւ ոչ ալ Խորեն Ա. Կաթողիկոսը»<sup>3</sup>:

Յիրաի Վեհափառը իր հեպ առաւ ոչ միայն համաժողովին որոշումներն ու այլ փաստաթուղթեր, այլեւ մի փոքր առիթ (!) Երևանի Կենդանաբանական պարտեզին համար: Վերջին օրը յարուկ րեսակցության մը առթիւ՝ Ն.Վ. Նայլէ Սելասիէ Կայսրը նուէրներ յանձնեց Ն.Ս. Վազգէն Ա. Կաթողիկոսին: Ես Նորին Սրբութեան կընկերանայի որպէս աստուածաբանական խորհրդական (1964-1974/75 Մայր Աթոռ Սուրբ Եկեղեցիներու Տնօրէնի Կառավարման Խորհուրդի մօտ) եւ թարգման հայ-անգլերէն զրոյցներու: Վեհափառ Տառնապետը կայսրէն սրացաւ մի քանի մեծածառ գորգեր, թանկագին ժամացոյցներ եւ մի խաչքար պնակ լի ոսկով (շուրջ 3-4 սմ մեծութեամբ հաքակտորներով): Այդ ոսկիներով էր որ Վեհափառը հեղափոխեց շինեց եւ կազմեց Վեհաբանի ոսկեայ խաչքարն ու մետաղական այբուբենը:

Մայր Աթոռ Սուրբ Եկեղեցիական պարագամատրութեան մաս կը կազմէին՝ Վեհափառի կողքին Կոմիտաս եպս. Տէր-Սարգիսեան, Արսէն վրդ. Բերբերեան՝ որպէս գաւազանակիր, Արթուր Տառնապետն՝ որպէս քարտուղար եւ Մեսրոպ Ժ. վրդ. Գ. Գրիգորեան: Եգիպտոսի մէջ շրջափռմբին միացաւ Մամբրէ արքեպս. Սիրունեան եւ Ադդիս Աբաբայի մէջ՝ Մանուէլ վրդ. Տանգեան՝ որպէս հոգևոր հովիւ: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պարտիրակութեան մաս կը կազմէին՝ Ն.Ս. Խորեն Ա. Կաթողիկոսի կողքին Գարեգին եպս. Սարգիսեան՝ որպէս աստուածաբանական խորհրդական, Սահակ եպս. Այվազեան, Սուրեն վրդ. Գաթարոյեան՝ որպէս գաւազանակիր եւ Երուանդ Ժ. վրդ. Արեւեան (հեղափոխեց կարգաթող):

Ադդիս Աբաբայի Եկեղեցական համաժողովի ընթացքին քննարկուեցան մի շարք հրապարակաւ հարցեր եւ առնուեցան համապարասխան որոշումներ, որոնց հետապնդումը կրնայ շարք օգուտ բերել մասնակից եկեղեցիներուն: Այդ որոշումները կարելի է դաստարեկ հետեւեալ կերպով շարք.-

Ա. Եկեղեցոյ աստուածաբանական վարդապետութիւնը այսօր ալ կը մնայ միեւնոյնը եւ ունի նոր որոշում՝ պէտք է արուի միայն ընդհանուր Եկեղեցոյ կողմանէ՝ Ս. Գրք եւ եկեղեցական հայրերու վկայութեանց հիման վրայ: Այսպէս կարելի է նշել որպէս օրինակ՝ Քրիստոսի խաչելութեան հարցը:

Բ. Միջոցներ մշակուեցան՝ ժողովուրդը առավել ներգրաւելու Եկեղեցոյ մէջ: Այս առնչութեամբ՝ ուշադրութեան առարկայ եղան՝ երիտասարդութիւնը, ընտանեկան քրիստոնէական կեանքը, քրիստոնէական դաստիարակութիւնը, վանական կեանքը եւ եկեղեցական կազմակերպութիւնը:

Գ. Գործակցութիւն աստուածաբանական դաստիարակութեան մէջ: Եթէ միջոցները եւ պայմանները թոյլարբեն՝ հասարակել Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու բարձրագոյն մի դպրեմանը:

Դ. Անկախութիւն. միասնաբար աշխարհի Քրիստոսի Անկախութեան փառաման համար:

Ե. Ճշդութեան դիրքն ու յարաբերութիւնները Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու՝

3 «Զարթոնք», 4 Փետր. 1965:

հանդէպ Բիւզանդական Ուղղափառ եկեղեցիներու, Նոովմէական-Կաթողիկէ Եկեղեցոյ, Անգլիկան եւ այլ Բողոքական եկեղեցիներու:

Զ. Աշխարհիսմէջ խաղաղութիւն եւ արդարութիւն ամրապնդելու մասին յայտարարութիւն մը բանաձևուեցաւ, որ կոչ կ'ուղէր ազգերու եւ ժողովուրդներու դեկլարներուն՝ արգիլել պարերագմը եւ նպաստել ժողովուրդներու՝ առանկէ բարեկամական կապերու մշակման:

Դժբախտաբար Եթովպիոյ մէջ կոմունիստական յեղափոխութիւնը խանգարեց վերոյիշեալ որոշումներու եւ ծրագրերու իրագործումը: Նայել Սեւասիէ կայսրը, որ համաժողովի կողմէ հռչակուած էր իբր «պաշտպան Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու», դառն վախճան ունեցաւ եւ իրեն հետ անհետացան խանդավառ յոյսերը: Այժմ երբ պայմանները դէպի բարին փոխուած են, նպատակայարմար կը լինի Ամենայն Տայոց Տայրապետութեան Մայր Աթոռոյ դեկլարութեամբ Ս. Էջմիածնի մէջ շարունակել Ադդիս Աբաբայի մէջ սկսուած շարժումը եւ զօրացնել կազմն ու դիրքը Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու:

Վիեննա-Ս. Էջմիածին  
նոյմբ. 2011